ՀՐԱՋԵՆՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ և ՀՐԱՋԵՆԱՅԻՆ ՋԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԸ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ

ԵԹԵ ԴՈՒՔ ԿԱՄ ՁԵՐ ՍԻՐԵԼԻՆ ԳՏՆՎՈՒՄ ԵՔ ԽԻՍՏ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ և ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ ԿԱՄ ԱՅԼՈՑ ՎՆԱՍԵԼՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ, ԱՊԱ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 911:

Cal OES
GOVERNOR'S OFFICE
OF EMERGENCY SERVICES

Հրազենով կատարվող բռնություն – սկսած զանգվածային կրակոցներից մինչև հրազենով արված ինքնասպանությունը – կանխարգելելի հանրային առողջության ճգնաժամ է, որը պատել է մեր վարչաշրջանին:

Նահանգապետ Գեյվին Նյուսոմի ղեկավարությամբ՝ Կալիֆոռնիան երկրի մասշտաբով իրականացրել է հրազենային անվտանգությանն առնչվող ամենազորեղ օրենքները, այդ թվում հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքները՝ կանխարգելելու ինքնավնասումը և այլոց վնասելը:

Հզորացնելով հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքներին դիմողների միջամտելու կարողությունները, ինչպես նաև կրթության և իրազեկվածության բարձրացման միջոցով՝ Կալիֆոռնիայի բնակիչները կարող են նվազեցնել հրազենի կիրառմամբ բռնության և հրազենային ինքնասպանության դեպքերը մեր համայնքներում:

ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԹԻՎՆ ԱՃԵԼ Է ԵՐԿՐԻ ՄԱՍՇՏԱԲՈՎ

Միացյալ Նահանգներում հրազենները **սպանությունների և ինքնասպանությունների ամենատարածված միջոցն են հանդիսանում**: Հրազենային բռնության մի շարք գործողությունների նախորդում են ակնհայտ կամ ոչ ակնհայտ սպառնալիքները, այդ թվում **հանրային զանգվածային բռնությունների երկու երրորդը**.

Կալիֆոռնիացիները **25% ԱՎԵԼԻ ՔԻՉ ՀԱՎԱՆԱԿԱՆ Է, ՈՐ ԿՄԱՀԱՆԱՆ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՐԱԿՈՑՆԵՐԻՑ** համեմատած այլ նահանգների մարդկանց հետ:

Կալիֆոռնիայում զենքի վաճառքի **թվերն աճում են**, իսկ տվյալները ցույց են տալիս, որ հրազենի մատչելիությունը **մեծապես ավելացնում է** այդ ռիսկը թե՛ հրազենին առնչվող բռնության, թե՛ ինքնասպանությունների մասով:

Ստենֆորդի համալսարանը վերջերս պարզել էր, որ զենքի սեփականատերերը և զենքի սեփականատերերի հետ ապրողները նշանակալիորեն ավելի շատ հավանական է՝ որ կվնասեն իրենք իրենց կամ այլոց: Մասնավորապես, հրազենի սեփականատերերը **ութ անգամ ավելի հավանական է** , որ կմահանան հրազենային ինքնասպանություններից, քան նրանք, ովքեր չունեն հրազեն, իսկ կանայք, ովքեր ունեն իրենց սեփական հրազենը՝ **35 անգամ ավելի հավանական է** քան նրանք, ովքեր չունեն: Բացի այդ, հրազենի տերերի հետ ապրող կալիֆոռնիացիները **երկու անգամ ավելի** հավանական է, որ կմահանան սպանությունից:

Կալիֆոռնիան առաջնահերթություն է տվել ողջամիտ միջոցառումների կիրառմանը՝ կանխարգելելու և նվազեցնելու հրազենային բռնությունները և հրազենային սպանության և ինքնավնասումների դեպքերը:

ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԿԱԼԻՖՈՌՆԻԱՆ ԵՐԿՐԻ ԱՌԱՋԱՏԱՐՆ Է

Երկրի մասշտաբով Կալիֆոռնիան դասակարգվում է որպես առաջատար նահանգ հրազենային անվտանգության հարցում՝ համաձայն **Giffords իրավաբանական կենտրոնի**, և 2021 թվականին դասակարգումների նույն տարում նահանգում արձանագրվել է հրազենային մահացությունների ցուցանիշի 37% նվազում՝ համեմատած երկրի միջին ցուցանիշի հետ:

Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքներն ուժի մեջ մտան 2016 թվականին՝ ընդլայնելով հրազենային անվտանգության գործիքակազմը, որը նախատեսված է կալիֆոռնիացիներին անվտանգ պահելու համար:

ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐ՝ ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄԸ ԿԱՄ ԱՅԼՈՑ ՎՆԱՍԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ

Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը տեղական դատարանի կողմից իրականացվող գործողություն է՝ նպատակ ունենալով ետ պահել ճգնաժամում գտնվող անձին ինքն իրեն կամ այլոց վնասելուց՝ ժամանակավորապես կանխելով հրազենից և զենքից օգտվելը, քանի դեռ արգելքն ուժի մեջ է:

Արգելքը քաղաքացիական չէ՝ նշանակելով, որ այն իր էությամբ քրեական չի համարվում և չի արտացոլվում անհատի կենսագրության վրա: Ըստ օրենքի այն չի համարվում պատիժ:

Կալիֆոռնիան **հրահանգել է** հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման 3,007 դատական արգելք 2016-ից 2020 թվականների ընթացքում: 2016-ից 2019 թվականների ընթացքում մոտավորապես-ն**հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքների 80%-ը** օգտագործվել է ներանձնային բռնության սպառնալիքի դեպքերում:

ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԿՅԱՆՔԵՐ ՓՐԿԵԼ

Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքները ճգնաժամում գտնվող անհատներին հնարավորություն են տալիս թուլացնել հնարավոր վտանգավոր իրավիճակը և անվտանգ կերպով օգտվել օգնությունից ու խնամքից, որը կարող է կանխել վնասարար կամ մահացու միջադեպի տեղի ունենալը:

Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքները հզոր գործիք են համարվում՝ կանխելու հրազենային սպանությունները, որոնք միջինում համարվում են Կալիֆոռնիայի հրազենային սպանությունների **կեսից ավելին**: Նույն երեք տարվա ժամանակահատվածում **հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքների մոտ 40%-ն** օգտագործվել է անհատների սպանության սպառնալիքի դեպքերում: Արգելքի տակ գտնվող անձանց շրջանում ոչ մի սպանություն չի արձանագրվել:

Երբ Կոնեկտիկուտը բարձրացրեց **իր կարմիր դրոշի վերաբերյալ օրենքի կիրարկումը** (որը համարժեք է հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքներին), համաձայն մի հետազոտության՝ տվյալ գործիքն ասոցացվում է նահանգի մակարդակով հրազենային սպանությունների ցուցանիշի 14% նվազման հետ:

Այս գործիքը նաև օգտակար է զանգվածային կրակոցների կանխարգելման դեպքում: Կալիֆոռնիայի հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի մասին օրենքի կիրառման առաջին երեք տարիների ընթացքում UC Davis-ի հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանք **օգնել են կանխարգելել 58 սպառնալիք հանդիսացող զանգվածային կրակոցներ**նահանգում:

ՀՐԱԶԵՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ ԵՎ ՉՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

UC Davis-ը պարզել է, որ կալիֆոռնիացիները **գերակշռող թվով համաձայնում են, որ նրանք կցանկանան կիրառել հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը** եթե ընտանիքի անդամի մոտ հուզական ճգնաժամ է, կամ եթե նրանք սպառնացել են ֆիզիկապես վնասել իրենց կամ մեկ ուրիշին:

ԱՆՀԱՏԻՆ ՄՏԵՐԻՄ ԱՆՁԻՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԶԳՈՒՇԱՑՆՈՂ ՆՇԱՆՆԵՐՆ ԱՌԱՋԻՆԸ ՏԵՍՆԵԼ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մոտավորապես **հինգ հոգուց չորսը** դրսևորում են զանգվածային կրակոցների հանցագործի զգուշացնող նշաններ, ինչպես օրինակ՝ նյարդայնությունը, վիրավորական վարքագիծը և դեպրեսիան՝ նախքան կրակոցների տեղի ունենալը, և որոշ անհատներ, ովքեր գտնվում են ճգնաժամում, նաև դրսևորում են ինքնավնասման ռիսկի նշաններ.

Նահանգապետ Նյուսոմը ստորագրել է օրենսդրություն՝ նպատակ ունենալով ընդլայնել այն ցանկը, ովքեր 2022 թվականին կարող են դիմել հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի համար: Նոր օրենքն ուժի մեջ կմտնի 2023 թվականի հունվարի 1-ին:

ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅԻՆԵՐԸ, ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՀԱՄԱՐ, ՆԱԵՎ ՀԱՅՏՆԻ ԵՆ ՈՐՊԵՍ «ԻՐԱՎԱՍՈՒ ԽՆԴՐԱՐԿՈՒՆԵՐ», ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ՝:

Ընտանիքի անդամ և սիրելի անձնավորություն՝ ըստ արյունակցական կապի, ամուսնության կամ որդեգրման:

Ընտանիքի և նույն սենյակում ապրող ներկայիս կամ նախկինում ապրած անձ:

Գործընկեր, ով կանոնավոր փոխազդեցություն է ունեցել ճգնաժամում հայտնված անձի հետ առնվազն մեկ տարի ժամկետով՝ ունենալով գործատուի հավանությունը:

Անհատ, ով ընդհանուր երեխա ունի կամ ժամադրվում է ճգնաժամում հայտնված անձի հետ:

Իրավապահ մարմիններ, այդ թվում Կալիֆոռնիայի խաղաղապահները:

Միջին դպրոցի, ավագ դպրոցի, քոլեջի կամ համալսարանի ուսուցիչ կամ աշխատող, որտեղ ճգնաժամում հայտնված անձը հաճախել է վերջին վեց ամիսներին՝ դպրոցի վարիչի կամ ղեկավարի թույլտվությամբ:

Եթե կալիֆոռնիացին չի դասակարգվում իրավասու խնդրարկուի խմբերից որևէ մեկում կամ եթե ինքնավնասման սպառնալիքը կամ այլոց հանդեպ բռնության գործադրումը մոտալուտ է, նրանք այդ մասին կարող են տեղեկացնել իրավապահ մարմիններին, նույնիսկ եթե վստահ չեն, թե արդյոք ներկայումս տվյալ անձը զենքից օգտվելու թույլտվություն ունի: Իրավապահ աշխատակիցը կարող է հետաքննել և պահանջ ներկայացնել կամ հայցել անհապաղ, արտակարգ իրավիճակին բնորոշ հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելք, եթե նա պարզում է, որ առկա են դրա հիմքերը:

ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԸ

Եթե դուք կամ ձեր սիրելին գտնվում եք խիստ ճգնաժամում և ինքներդ ձեզ կամ այլոց վնասելու անմիջական վտանգի տակ, ապա զանգահարեք 911:

Եթե կարծում եք, որ հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը համապատասխանում է ձեր իրավիճակին, արգելքի համար դիմելու անհրաժեշտ փաստաթղթերը հասանելի են **առցանց** և անհատի **տեղական Գերագույն դատարանում**: **Դիմելու համար չկա որևէ վճար:**

ԴԻՄԵԼՈՒ ՉՈՐՍ ՔԱՅԼԵՐԸ:

1.
Լրացնել միջնորդությունը և պատրաստել պահանջ ներկայացնելու փաստաթղթերը:

2.
Ներկայացնել ձեր միջնորդությունը դատական գործավարին:

3.
Ետ ստանալ միջնորդությունը դատական գործավարից:

4.
Կազմակերպել, որ հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը փոխանցվի ճգնաժամում հայտնված անձին:

Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի պահանջ ներկայացնելու մասին քայլ առ քայլ ներկայացվող ընդհանուր ամփոփագիրը կարելի է գտնել այստեղ՝: **GunSafety.CA.gov**:Կալիֆոռնիայի դատարանների կայքէջը նաև տրամադրում է **քայլ առ քայլ ուղեցույց** հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքին պատշաճ կերպով դիմելու համար:

ԱՐԳԵԼՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԽՎԱԾ Է ՏԵՍԱԿԻՑ

Եթե իրավապահ մարմնի կողմից ներկայացված արտակարգ իրավիճակից բխող արգելք է առկա, կամ երբ անհատն առաջին հերթին դիմում է հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի համար, իսկ դատավորը նախապես հաստատում է արգելքը, հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական ժամանակավոր արգելքը տևում է մինչև երեք շաբաթ (21 օր): Դատարան ներկայանալը միայն պարտադիր է, եթե արգելքի համար դիմող անձը կցանկանար 21 օրից ավելի երկար ժամկետով դիմել արգելքի համար:

Պաշտոնական ծանուցագրից և դատական լսումներից հետո տրված արգելքները կարող են տևել մեկից մինչև հինգ տարի: Դատական լսման ժամանակ դատավորը հաշվի կառնի բոլոր ապացույցները և կորոշի, թե արդյոք պետք է հաստատել հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքը մինչև հինգ տարի ժամկետով: Շարունակական մտահոգության դեպքում արգելքը կարող է նորացվել ժամկետը սպառվելուց հետո:

ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅՈՒՄ ՏԵՎԵԼ ԵՆ 7+ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ

Կալիֆոռնիայի հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքի գործիքը սահմանվել է 2014 թվականի Իսլա Վիստայում տեղի ունեցած զանգվածային կրակոցների ողբերգությունից հետո, սակայն իրավապահ մարմինները չունեին իրավական գործիքներ, որպեսզի կասեցնեն հրազենների տիրապետումը տվյալ անձի կողմից:

Այս իրավական բացը լրացնելու նպատակով ներմուծվեց AB 1014-ը (2014 թվականին) և օրենքի ուժ տրվեց՝ Կալիֆոռնիան դարձնելով առաջին նահանգներից մեկը երկրում, որն ընդունել է այս խիստ կարևոր գործիքը: Օրենքն ուժի մեջ մտավ այն ընդունելուց հետո երկու տարի անց՝ 2016 թվականին:

ԿԱԼԻՖՈՌՆԻԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Կալիֆոռնիայում իրականացված հրազենային զենքի կիրառմամբ բռնության կանխարգելման այլ միջոցառումները ներառում են:

- **Կենսագրական տվյալների համընդհանուր ստուգումներ**

  Կալիֆոռնիան կենսագրական տվյալների ստուգումներ է պահանջում բոլոր հրազենների գնումների և փոխանցումների դեպքում, այդ թվում մասնավոր փոխանցումները և վաճառքը զենքի վաճառասրահներում: Կոլումբիայի շրջանը և ևս 14 նահանգ կենսագրական տվյալների համընդհանուր ստուգումներ են պահանջում:

- **Հոգեկան առողջության մասին հաշվետվողականություն**

  Կալիֆոռնիայի օրենքը պահանջում է ամբուլատոր և ստացիոնար ոչ կամավոր բուժման, ինչպես նաև խնամակալության տակ գտնվողների մասին անհապաղ հաշվետվության տրամադրում: Հոգեկան առողջության բուժմամբ զբաղվող հաստատություններից և հոգեթերապևտներից նույնպես պահանջվում է հաշվետվության տրամադրում որոշակի հանգամանքների դեպքում:

- **Գնումների մասով տարիքային սահմանափակումներ**

  Կալիֆոռնիայում դուք պետք է առնվազն 21 տարեկան լինեք հրազեն գնելու համար: Այս սահմանափակման հարցում առկա են շատ քիչ բացառություններ (օրինակ՝ 18 տարեկան անձը, ով ունի որսորդական վավեր լիցենզիա, ի վիճակի է գնել որոշակի երկար տեսակի հրազեններ):

- **Սպասման ժամանակահատված**

  Կալիֆոռնիան հրազենի բոլոր գնումների դեպքում ունի սպասման 10 օրյա ժամկետ: Նահանգն ինն նահանգներից մեկն է Կոլումբիայի շրջանի հետ մեկտեղ, որն ունի սպասման ժամանակահատված, իսկ Կալիֆոռնիայի սպասման ժամանակահատվածն ամենաուժեղներից մեկն է համարվում:

- **Հարձակվողական զենքերի արգելք**

  Կալիֆոռնիայի օրենքը խստորեն արգելում է հարձակվողական զենքերը և մեծ տարողությամբ փամփուշտատուփերը: Սա ներառում է հարձակվողական զենքերի տիրապետումը, բաշխումը, վաճառքը և արտադրությունը:

Հրազենային զենքի կիրառմամբ բռնության զսպման դատական արգելքների և Կալիֆոռնիայի հրազենային անվտանգության ջանքերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ **GunSafety.CA.gov.**